

ՀԱՄԱԶԱՅՆ ԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Բելառուսի Հանրապետության կառավարությունը (այսուհետև՝ «Կողմեր»),

ելնելով Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջազգային համագործակցության և հարկային օրենսդրության պահպանման հարցերում փոխօգնության կարևորությունից,

ցանկանալով այդ նպատակով հնարավորին չափ լայնորեն աջակցել միմյանց, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1
Տերմինների սահմանումը

Սույն Համաձայնագրի նպատակների համար կիրառվող տերմինները նշանակում են՝

«հարկային օրենսդրություն» - Կողմի տարածքում հարկերի տեսակներն ու դրանց գանձման կարգը սահմանող և հարկային պարտավորությունների առաջացման, փոփոխման և դադարեցման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավաբանական նորմերի ամբողջություն,

«հարկային օրենսդրության խախտում» - հակաիրավական գործողություն կամ անգործություն, որն արտահայտվում է հարկատուի կողմից բյուջեի հանդեպ պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մեջ, որի համար սահմանված է իրավաբանական պատասխանատվություն,

«իրավասու հարկային մարմիններ».

Հայաստանի Հանրապետության առնչությամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարար կամ նրա լիազորված ներկայացուցիչ,

Բելառուսի Հանրապետության առնչությամբ՝ Բելառուսի Հանրապետության պետական հարկային կոմիտե,

«հարցում անող հարկային ծառայություն» - հարկային հարցերով աջակցության մասին հարցում անող Կողմի իրավասու հարկային մարմին (այսուհետև՝ «աջակցության մասին հարցում»),

«հարցումը ստացող հարկային ծառայություն» - աջակցության մասին հարցումը ստացող Կողմի իրավասու հարկային մարմին:

Հոդված 2 Համաձայնագրի կիրառման ոլորտը

Հարկային օրենսդրության պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Կողմերը հարկային իրավասու մարմինների միջոցով փոխադարձաբար աջակցում են միմյանց՝

հարկային օրենսդրության խախտումները կանխելիս և խափանելիս,
աջակցության մասին հարցման հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից հարկային օրենսդրությունը կատարելու վերաբերյալ տեղեկություն տրամադրելիս,
ազգային հարկային համակարգերի և հարկային օրենսդրության ընթացիկ փոփոխությունների մասին տեղեկություն տրամադրելիս,
հարկային մարմինների աշխատանքն ապահովող համակարգչային համակարգեր ստեղծելիս և բանեցնելիս,
հարկ վճարողների և հարկային մարմինների հետ աշխատանքը կազմակերպելիս՝ ներառյալ հարկային օրենսդրության պահպանման վերահսկողության ապահովման վերաբերյալ մեթոդական ցուցումների մշակումը,
կադրերի ուսուցման և մասնագետների փոխանակման բնագավառում,
համատեղ գործողություններ պահանջող այլ հարցերում:

Սույն Համաձայնագրի դրույթները չեն խոչընդոտում իրավասու հարկային մարմինների համագործակցությանը՝ Կողմերի միջև կնքված այլ համաձայնագրերին համապատասխան:

Հոդված 3 Աջակցության մասին հարցման ձևն ու բովանդակությունը

Աջակցության մասին հարցումը ուղարկվում է գրավոր, որին կցվում են քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Բացառիկ դեպքում աջակցության մասին հարցումը կարելի է անել բանավոր՝ հնարավորինս սեղմ ժամկետներում այն հաստատելով գրավոր:

Աջակցության մասին հարցումը պետք է ընդգրկի՝
հարցում անող հարկային ծառայության անվանումը,
հարցումը ստացող հարկային ծառայության անվանումը,
հարցման նպատակն ու պատճառը,
հարկ վճարողի անվանումը (անունը) ու հասցեն, որի նկատմամբ ստացվում է հարցումը,
հարցման էության և դրա հետ կապված իրավաբանական հանգամանքների հսկիորճ շարադրանքը՝ նշելով դիտարկվող ժամանակաշրջանն ու հարկերի կոնկրետ տեսակները:

Հարցումը պետք է ներկայացվի ռուսերեն:

Հարցումը ստացող հարկային ծառայությունն իրավասու է աջակցության մասին հարցման վերաբերյալ պահանջել լրացուցիչ տեղեկություն, եթե դա անհրաժեշտ է հարցման կատարման համար:

Հոդված 4

Աջակցության մասին հարցման կատարման կարգը

Իրավասու հարկային մարմինները միմյանց աջակցում են՝ ազգային օրենսդրությանն ու սույն Համաձայնագրին համապատասխան:

Հարցում անող հարկային ծառայությունը իր խնդրանքով կարող է ծանուցվել աջակցության մասին հարցումը կատարելու համար իրականացվող գործողությունների անցկացման ժամանակի և տեղի մասին, իսկ նրա ներկայացուցիչները, լրացուցիչ համաձայնության դեպքում, կարող են ներկա լինել դրանց անցկացմանը:

Եթե աջակցության մասին հարցումը հարցում ստացող հարկային ծառայության կողմից չի կարող կատարվել, նա հարցումը ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցում է հարցում անող հարկային ծառայությանը՝ նշելով աջակցելու մերժելու պատճառները:

Աջակցելու մասին հարցումը կարող է մերժվել, եթե դրա կատարումը հակասում է հարցում ստացող Կողմի հարկային օրենսդրությանը կամ վարչարարական պրակտիկային:

Հարցումը ստացող Կողմը իր պետության տարածքում կրում է աջակցության մասին հարցման կատարման հետ կապված բոլոր ծախսերը:

Հոդված 5

Տրամադրվող տեղեկության բովանդակությունը

Իրավասու հարկային մարմինները, սեփական նախաձեռնությամբ կամ աջակցության մասին հարցման հիման վրա, միմյանց տրամադրում են տեղեկություն՝

ձեռնարկությունների, նրանց մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, ներառյալ՝ գտնվելու վայրի, ենթակայության, սեփականության ձևի և այլնի հետ,

իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից պետական և սուստրային բանկերում հաշիվներ բացվելու, ինչպես նաև դրանցում դրամական միջոցների առկայության ու շարժի հետ,

տվյալ Կողմի տարածքում իրավաբանական ու ֆիզիկական անձանց ստացած բոլոր տեսակի եկամուտների ու հարկման օբյեկտների, հարկերի վճարված գումարների կամ հարկման հետ կապված այլ տեղեկատվության հետ:

Հոդված 6

Փաստաթղթեր և այլ նյութեր ներկայացնելը

Հարցում ստացող հարկային ծառայությունն աջակցության մասին հարցման հիման վրա ներկայացնում է հարկային հետաքննություն կատարելու համար անհրաժեշտ նորմատիվ ակտեր, փաստաթղթերի վավերացված պատճեններ ու այլ նյութեր:

Փաստաթղթերի և այլ նյութերի բնօրինակները կարող են պահանջվել վավերացված պատճենները հետաքննության համար բավարար չլինելու դեպքում:

Փաստաթղթերի և այլ նյութերի փոխանցվող բնօրինակները պետք է վերադարձվեն համաձայնեցված ժամկետներում:

Հոդված 7

Տեղեկության փոխանցման կարգը

Աջակցության մասին հարցումները, փաստաթղթերը, նյութերը և այլ տեղեկություն փոխանցվում են Կողմերի համաձայնությամբ որոշվող կարգով:

Աջակցությունն իրականացվում է իրավասու հարկային մարմինների, ղեկավարների կողմից որոշված պաշտոնատար անձանց ուղղակի կապերի շրջանակներում:

Հոդված 8

Գաղտնիության պահպանումը

Կոնկրետ հարկ վճարողներին վերաբերող տեղեկությունը համարվում է գաղտնի և ապահովվում է հարցում ստացող հարկային ծառայության պահանջներին համապատասխանող պաշտպանության ռեժիմով:

Ստացած տեղեկությունը Կողմերը կարող են օգտագործել միայն սույն Համաձայնագրով նախատեսված նպատակների, այդ թվում նաև վարչական կամ դատական քննության համար: Տեղեկությունը կարող է այլ նպատակների համար օգտագործվել միայն հարցում ստացող հարկային ծառայության համաձայնությամբ:

Հոդված 9

Համաձայնագրի կատարումը

Սույն Համաձայնագիրը մեկնաբանելիս կամ կիրառելիս ծագող վիճելի հարցերը կարգավորելիս Կողմերը կձգտեն հասնել փոխհամաձայնության:

Անհրաժեշտության դեպքում իրավասու հարկային մարմինները սույն Համաձայնագրի իրականացման ընթացքի և նրա մեջ փոփոխություններ կատարելու նպատակահարմարության գնահատման համար այն կկանգնեն խորհրդակցություններ:

Սույն Համաձայնագրի դրույթների կատարման նպատակով Կողմերը և իրենց իրավասու հարկային մարմինները կարող են առանձին հարցերի շուրջ կնքել լրացուցիչ համաձայնագրեր:

Հոդված 10

Փոփոխություններ և լրացումներ

Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են մտցվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող արձանագրություններով:

Հոդված 11

Համաձայնագրի ուժի մեջ մտնելն ու գործողության դադարեցումը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

Ժամուցման ստանալու պահից և գործելու է այնքան ժամանակ, մինչև Կողմերից մեկը, մինչև վեց ամիսը լրանալը, գրավոր ծանուցում է նրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կնքված է Մինսկ քաղաքում 2000թ. հուլիսի 19-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բելառուսերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ համագոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների առաջացման դեպքում որպես հիմք ընդունվում է ռուսերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ



ԲԵԼԱՐՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

